# ՋԱԼԱԼ ԱԴ-ԴԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Պատմ. գիտ. թեկնածու Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

*XIII դարի երկրորդ տասնամյակի դեպքերը նկատելի հետք թողեցին Անդրկովկասի հետագա պատմության վրա։ Այդ տարիներին տեղի ունեցած խոշորագույն ռազմական իրադարձությունները՝ մոնղոլների առաջին, հետախուզական արշավանքը (1220—1221) և վերջին խորեզմշահ Ջալալ ադ-Դինի (1220—1231) յոթնամյա պատերազմական գործողությունները Անդրկովկասում 1225—1231 թթ., նախադուռ դարձան տեղական զարգացած ավատատիրական հասարակությունների վրա քոչվոր ժողովուրդների երկարատև քաղաքական տիրապետության հաստատման՝ պայմանավորելով անդրկովկասյան ժողովուրդների սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացի ընդհատումն ու աստիճանական հետադիմությունը հետագա դարերում։ Անդրկովկասի երկրներին առանձնապես ծանր հարված հասցրեցին Ջալալ ադ-Դինի արշավանքները՝ կանխորոշելով այն աղետները, որ շատ չուտով պատճառելու էին մոնղոլների ներխուժումները։*

*Կովկասագիտական գրականության մեջ խորեզմշահի գործունեությունը Անդրկովկասում մեկ անգամ չէ, որ գրավել է հետազոտողների ուշադրությունը։ Սակայն նշելի է, որ ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում տեղական՝ հայկական և վրացական աղբյուրների հիման վրա և այդ պատճառով էլ հարցերի որոշակի՝ սկզբնաղբյուրների ընձեռած նյութով սահմանափակված շրջանակ է ընդգրկել։ Մյուս կողմից, գլխավոր հայկական ու վրացական աղբյուրները, ստեղծված լինելով ուսումնասիրվող դեպքերից առնըվազն մի քանի տասնամյակ անց, ոչ միշտ են ստույգ տվյալներ ընձեռում առանցքային իրադարձությունների ընթացքն ու ժամանակագրությունը պարզելու համար։ Ջալալ ադ-Դինի արշավանքներն անհամեմատ ավելի լիակատար ու համակողմանի արտացոլում են գտել մասնավորապես արաբական ու պարսկական՝ քննվող դեպքերին ժամանակակից աղբյուրներում. Իբն ալ-*

---

[1] *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 198—205։* Լ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 183—193։ «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 602—605։* Ա. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքի և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր, հաս. գիտ.», 1980, № 6, էջ 50—63։* ივ. ჯავახიშვილი, ქართველი ერის ისტორია, ტ. III, თბ., 1966, გვ. 46—76; თ. ფარცვანია, ჯალალ ად-დინის მიერ საქართველოს დაპყრობის ისტორიიდან, „საისტორიო კრებული“, VI, თბ., 1976, გვ. 31—49; *Նույնի՝* ნასავიდ თხზულება—„სულთან ჯალალ ად-დინ მანკბურნის ცხოვრების აღწერა“—როგორც წყარო საქართველოს ისტორიისათვის, „საისტორიო კრებული“, VII, თბ., 1977, გვ. 200—216; საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III, თბ., 1979, გვ. 538—516.

Ասիրի (մահացել է 1233 թ.) բազմահատոր «Պատմությունում»[2], Ջալալ ադ-Դինի քարտուղար, իրադարձությունների ականատես ու անմիջական մասնակից ան-Նասավիի երկում[3], Աբդ ալ-Լաթիֆ ալ-Բաղդադիի՝ ականատեսներից քաղած գրառումներում[4]։ Այս սկզբնաղբյուրները ոչ միայն աչքի են ընկնում համեմատաբար ճշգրիտ ժամանակագրությամբ, հանգամանորեն են պատկերում ռազմական գործողությունների ընթացքը, զորքերի տեղաշարժերի երթուղիները, այլև արտացոլում են ժամանակաշրջանի արտակարգ բարդ միջպետական հարաբերությունները, Ջալալ ադ-Դինի արտաքին ու ներքին քաղաքականությունը, նշանակալիորեն նպաստում են նաև Հայաստանում և Վրաստանում գոյություն ունեցող ներքին իրադրությունը ճիշտ ըմբռնելուն, տեղեկություններ են հաղորդում հայկական որոշ երկրամասերի ճակատագրի շուրջ և հաճախ ավելի հանգամանորեն են լուսաբանում խորեզմցիների դեմ Անդրկովկասում ծավալված պայքարը։ Ջալալ ադ-Դինի արշավանքների պատմությանն անդրադառնալը անհրաժեշտ է պարզաբանելու համար ներքին կացությունը Հայաստանում և Վրաստանում՝ մոնղոլական վերահաս աղետի նախօրյակին։ Լուսաբանելով այն պատճառները, որ հնարավորություն տվեցին խորեզմշահի անհամեմատ փոքրաթիվ, պարենավորման ու համալրման առումով անհավասար պայմաններում գտնվող զորքերին հաղթող դուրս գալ վճռական ճակատամարտերում, տարիներ շարունակ գրեթե անպատիժ ավերել ու կողոպտել ամենահեռավոր շրջանները, կարելի է բացահայտել և մոնղոլական նվաճումների նախահիմքերը։

Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների ծանրությունը առաջիններից մեկը կրեց խորեզմշահերի պետությունը։ Մինչ այդ ամբողջ Մերձավոր Արևելքում ամենահզոր իշխանավորներից մեկը համարվող խորեզմշահ Մուհամեդը (1200—1220) անկարող եղավ կազմակերպված դիմադրություն ցույց տալու թշնամուն, դիմեց փախուստի և մահացավ Կասպից ծովի կղզիներից մեկում։ Նրա բազմաթիվ որդիներից միայն Ջալալ ադ-Դինը ընդունակ գտնվեց դիմագրավելու մոնղոլներին, սակայն նա էլ չկարողացավ կասեցնել թշնամու հարձակումը և հարկադրված փախավ Հնդկաստան։ Այստեղ նա կարճ ժամանակամիջոցում իր դեմ հանեց տեղական իշխողներին և ստիպված էր իր հետագա հույսերը կապել Իրանի, Պարսկական Իրաքի և Անդրկովկասի հետ։ Այդ տարածքները դեռևս միայն թեթևակիորեն էին ենթարկվել մոնղոլական ավերածություններին, հարուստ էին և բարեբեր, ունեին ռազմական կարողություն, սակայն միավորված չլինելով՝ ի վիճակի չէին լրջորեն դիմադրել խորեզմշա-

---

2 Տե՛ս «Материалы по истории Азербайджана из Тарих-ал-Камиль (Полного свода истории) Ибн ал-Асира, Баку, 1940 (այսուհետև՝ Ибн ал-Асир):

3 Տե՛ս Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Буниятова, Баку, 1973 (այսուհետև՝ ан-Насави):

4 Այս արժեքավոր աղբյուրի վրա միայն վերջերս ուշադրություն հրավիրեց Կ. Կահենը՝ թարգմանաբար հրատարակելով որոշ հատվածներ. տե՛ս C. Cahen, 'Abdallatīf al Baghdādī et les Khwārizmiens, „Iran and Islam, in memory of the late Vladimir Minorsky", Edinburgh University Press, 1971, p. 149—166: Ալ-Բաղդադին (1162/3—1231/2) մոտիկ է գտնվել իրադարձությունների ծավալման վայրերին. 1228—29 թթ. նա, ճանապարհորդելով Երզնկայից Հալեպ, ճանապարհին այցելել է Կամախ, Տերիկ և Մալաթիա. տե՛ս Encyclopédie de l' Islam, Nouv. ed., t. 1, Leyde—Paris, 1960, p. 76:

հին։ Ջալալ ադ-Դինը հույս ուներ նաև իր կողմը գրավել որոշ երկրամասերի մահմեդական բնակչությանը՝ ներկայացնելով իրեն իբրև իսլամի զինվոր ու մուսուլմանների պաշտպան ընդդեմ քրիստոնյաների ու մոնղոլների։ Միայն նոր տարածքների գրավումը և մի դրոշի ներքո համախմբումը, մոնղոլների դեմ հզոր միավորման ստեղծումը կարող էին հույսեր ներշնչել խորեզմշահին, որ նա ուժ կունենա հաղթելու թշնամուն և վերադարձնելու իր կորցրած թագավորությունը։

Իր ծրագրերի իրականացումը Անդրկովկասում խորեզմշահը սկսեց դիվանագիտական քայլերով։ 1225 թ. հեշտությամբ գրավելով Ատրպատականը և վերջ տալով այնտեղ Ելտկուզյանների վերջին ներկայացուցիչ Ուզբեկի (1210—1225) իշխանությանը, Ջալալ ադ-Դինը հուլիս ամսին Մարաղայից ուղևորներով դիմեց Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դին Քեյ-Կուբադին (1219—1237), Հյուսիսային Միջագետքի և Հարավային Հայաստանի որոշ մասերի տիրակալ ալ-Աշրաֆ Մուզաֆֆար ադ-Դին Մուսային (1210—1237), Դամասկոսի տեր ալ-Մուազամ Շարաֆ ադ-Դին Իսային (1218—1227) և Եգիպտոսի իշխող ալ-Քամիլ Մուհամադին (1218—1238)։ Տանուցելով իր նվաճումների մասին և հայտարարելով իրեն մուսուլմանների պաշտպան, խորեզմշահը հավաստում էր իր բարեկամական մտադրությունները[5]։ Շատ շուտով, սակայն, ակնհայտ դարձավ, որ նա դիվանագիտական հարաբերություններ հաստատելու իր փորձերով ցանկանում էր ժամանակ շահել և աղատել ձեռքերը Հայաստան և Վրաստան արշավելու նպատակով։

Վրաստանի վրա հարձակվելու գաղափարը նոր չէր խորեզմշահերի համար։ Ըստ ան-Նասավիի, 1217 թ., երբ Ելտկուզյան աթաբեկ Ուզբեկն ընդունեց խորեզմշահ Մուհամեդի դերակայությունը, Մուհամեդը 50 հազարանոց զորք էր նախապատրաստում Վրաստան արշավելու մտադրությամբ։ Ճիշտ է, այդ ձեռնարկումը ի կատար չածվեց, քանի որ մինչ այդ Բաղդադի վրա շարժվելիս խորեզմցիների զորքը մեծ կորուստներ կրեց և խորեզմշահը վերադարձավ հայրենիք, սակայն վրաց արքունիքը շտապեց նվերներ ուղարկել Մուհամեդին[6] և մինչև 1222 թ., այսինքն՝ Մուհամեդի մահը և մոնղոլական առաջին արշավանքի ավարտը, փաստորեն որևէ հարձակում չձեռնարկվեց Ուզբեկի տիրույթների վրա[7]։ Մուհամեդի ծրագրերի մասին առավել ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ալ-Բաղդադին, պատմելով Թբիլիսին իր մայրաքաղաքը դարձնելու և «Ռումի [սուլթանության], Հայաստանի, ղփչաղաց աշխարհի, արևելքի և արևմուտքի բոլոր երկրների վրա կառավարելու»[8] խորեզմշահի մտադրությունների մասին։

Խորեզմցիների արշավանքի մասին ընդարձակ տեղեկություններ հաղորդող Կիրակոս Գանձակեցին հետևյալն է գրում 1225 թ. դեպքերի մասին. «Յառաջ ասացեալ ազգն հիւսիսոյ արևելից, որ Թաթարն անուանէր, ի նեղ էարկ զսուլտանն Խորասանայ զՋալալադինն, և եհար զզօրս նորա, և տապալեաց

---

5 Տե՛ս ан-Насави, стр. 155, 357—359.

6 Տե՛ս նույն տեղում, էջ 61։

7 Տե՛ս Ա. Սահնազարյան, նշվ. աշխ., էջ 50—51։

8 C. Cahen, նշվ. աշխ., էջ 151։ Ուստի անհավանական է Ի. Պ. Պետրուշևսկու այն ենթադրությունը, թե Վրաստանի դեմ պատերազմի մեջ խորեզմշահին ներքաշել է նրա վեզիր Շարաֆ ալ-Մուլքը. տե՛ս И. П. Петрушевский, Вазир Шараф ал-Мульк, сб. «Ближний и Средний Восток», М., 1962, стр. 37:

զաշխարհս նորա։ Եւ հանին զնա փախստական ընդ աշխարհն Աղուանից. և եկն նա ի քաղաքն Գանձակ և առ զնա։ Եւ կուտեաց իւր զօրս անթիւս ի պարսից և ի տաճկաց և ի թուրքաց և եկն յաշխարհս Հայոց»[9]։ Այսպիսով, ըստ Գանձակեցու, խորեղմցիները Հայաստան են ներխուժել Գանձակը գրավելուց հետո, Աղվանքի վրայով։ Այլ աղբյուրների միահամուռ վկայությունները, սակայն, ստիպում են կասկածի տակ առնել նրա հաղորդման ճշգրտությունը և բոլորովին տարբեր կերպ պատկերել Ջալալ ադ-Դինի զորքերի երթուղին։ Վրաց ժամանակագրի վկայությամբ, խորեղմցիները նախ «...եկան հասան Ատրպատական՝ շուրջ հարյուր քառասուն հազար մարդ։ [Ապա] հասան Երկայնաբազուկների երկրին, որովհետև Դվինը պատկանում էր Իվանե աթաբեկին, իսկ Անին տվել էր իր եղբորորդի մանդատուրթուխուցես Շանշեին։ Այս խորեղմցիք եկան Լաշա-Գեորգիի մահվան երրորդ տարին՝ գերելու և ավերելու Դվինն ու նրա շրջակա երկրները»[10]։ Վարդանի հաղորդմամբ ևս, խորեզմշահի հարվածը նախ հասել էր հայոց միջնաշխարհին. «ընդ Ադլպարական երկիր ի յՈստանն հայոց, առնուն զնա և լնուն զդաշտն լայնատարած վրանօք»[11]։ Նույնն է վկայում և Ստեփանոս Օրբելյանը. «գայ (Ջալալ ադ-Դինը— Հ. Մ.) ընդ Պարսկաստան, և անցեալ ընդ Ատրպատական մտանէ յաշխարհն Հայոց»[12]։ Ուստի հայ-վրացական զորքերը փորձեցին կասեցնել թշնամու հարձակումը ոչ թե Գանձակ—Թբիլիսի ուղու վրա, ինչպես սպասելի կլիներ, եթե խորեզմշահը ներխուժեր Աղվանքից, այլ վճռական մարտի են ելել Գառնիում։ Այս կարևորագույն ճակատամարտում հայ-վրացական բանակը հիմնականում ներքին հակասությունների ու տարաձայնությունների պատճառով

---

9 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 224։

10 «Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 59։

11 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 143։ Մ. Էմինը, հնարավոր է Կ. Գանձակեցու երկի ազդեցությամբ, հետևյալ կերպ է թարգմանել այս հատվածը. «Через Атерапатаканскую землю в столицу армянскую (Гандцак)» (Вардан Великий, Всеобщая история, пер. Н. Эмин, М., 1861, стр. 173), իսկ Ք. Պատկանյանը՝ «Через аделбараканскую область к армянской столице Гандзаку» (К. Патканов, История монголов по армянским источникам, вып. I, СПб., 1873, стр. 4): Որ «Ոստանն Հայոց»-ի ներքո Գանձակը պետք չէ հասկանալ, երևում է Հովսեփ Դվնացու վկայաբանությունից. «Եւ իբրև եկն ամիրապետն մեծ Աթապակ կոչեցեալ ի յոստանն մեծ հայոց ի Դուին քաղաք» (Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903, էջ 55)։ Վարդան Արևելցին խոսում է խորեզմշահի երկու որդիների հարձակման մասին, քանի որ Հնդկաստանից վերադառնալուց հետո Իրաքում Ջալալ ադ-Դինին էր մրցել նրա եղբայր Ղիյաս ադ-Դինը (տե՛ս ан-Насави, стр. 142): Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու պատմությունների հիման վրա կազմված Անանուն Սեբաստացու ժամանակագրությունում (տե՛ս Վ. Հակոբյան, «Անանուն ժամանակագրության» աղբյուրների մասին կամ Վ. Արևելցու «Պատմութիւն տիեզերականի» համառոտ խմբագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1949, № 7, էջ 51—62) իրադարձությունները հիմնովին խաթարված են ներկայացված. իբրև թե խորեզմշահի երկու որդիները իր երկրից հալածել են Խորասանի սուլթան Ջալալ ադ-Դինին, որն էլ արշավել է Հայաստան ու Վրաստան (տե՛ս «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 134, 137—138)։

12 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 399։

պարտություն կրեց, հետագա գործողություններում նախաձեռնությունը լիովին զիջելով Ջալալ ադ-Դինին։

Գառնիում հաղթանակ տանելուց հետո, սակայն, խորեզմշահը չշարունակեց առաջխաղացումը, այլ ավարառության նպատակով նախ գրավեց Դվինը[13], իսկ այնուհետև անսպասելիորեն վերադարձավ Թավրիզ՝ լսելով, որ այնտեղ խռովություն է պատրաստվում իր դեմ[14]։ Ըստ ան-Նասավիի, խորեզմշահը ավարառության նպատակով Հայաստանում և Վրաստանում թողեց իր բանակի աջ թևի ամիրաներին, որոնք երեք ամիս ասպատակում էին այլևայլ երկրամասեր[15]։ Թավրիզից[16] սուլթանը ուղարկեց իր զորավարներից Ուր-խանին, որը գրավեց Գանձակը, Բայլականը և Շամքորը[17]։ Ինքը՝ Ջալալ ադ-Դինը, դավադրությունը դաժանորեն ճնշելուց հետո մեկնեց Խոյ[18], իսկ այնուհետև կրկին ներխուժեց Հայաստան և Վրաստան[19]։ Խորեզմշահի այս երկրորդ հարձակումը նկատի ունի Վարդան Արևելցին, որը, Ջալալ ադ-Դինի Թավրիզ վերադառնալը արձանագրելուց հետո պատմում է. «Զկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրացն Գագայ ի Տփխիս»[20]։ Այս վկայության հիման վրա կարծվել է, որ Ջալալ ադ-Դինը Թբիլիսիի վրա է արշավել հարավ-արևելքից, Գանձակը գրավելուց հետո[21]։ Սակայն պատմիչի հաղորդումը ճշգրտման կարիք է զգում, ինչպես ժամանակագրության, այնպես էլ խորեզմցիների բանակի երթուղու առումով։ Նա, թվագրելով իրադարձությունները «զկնի ամի միոյ»-ով, այսինքն՝ 1226 թ., հավանաբար, ելակետ է ունեցել Թբիլիսիի գը-

---

13 Հ. Մանանդյանի (տե՛ս նշվ. աշխ., էջ 199) և Լ. Բաբայանի (տե՛ս նշվ. աշխ., էջ 184, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 604) կարծիքով, Դվինը գրավվել է մինչև Գառնիի ճակատամարտը, սակայն, ըստ ան-Նասավիի (տե՛ս ан-Насави, стр. 159), քաղաքի գրավումը իրականում հաջորդել է ճակատամարտին։ Միխայել Ասորու ժամանակագրության շարունակողի վկայությամբ, Դվինի մահմեդականները սկսել են քրիստոնյաների կոտորածը՝ Գառնիի կռվի ելքի լուրն առնելուն պես (տե՛ս Միխայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, էջ 529)։ Ան-Նասավին նշում է, սակայն, որ քաղաքը գրավվել է գրոհով, որոշ ժամանակվա պաշարումից հետո։ Ինչպես երևում է, Դվինը կամավոր չի հանձնվել թշնամուն, և խորեզմշահը այն նվաճել է քաղաքի բնակիչների մահմեդական մասի աջակցության շնորհիվ։

14 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 157—158: Ըստ ան-Նասավիի, դավադիր համարվողները իրականում անմեղ են եղել (տե՛ս ан-Насави, стр. 160—162)։

15 Տե՛ս ан-Насави, стр. 160—161, հմմտ. «Վրաց ժամանակագրություն», էջ 60—61։

16 Ջալալ ադ-Դինի վերադարձը Թավրիզ նշում է և Վրաց ժամանակագիրը, տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 61։

17 Տե՛ս ан-Насави, стр. 163. Կ. Գանձակեցին՝ Գանձակի (տե՛ս էջ 224), իսկ Վրաց ժամանակագիրը՝ նաև Շամքորի (տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 62) գրավումը վերագրում են անձամբ Ջալալ ադ-Դինին, որ ստույգ չէ։

18 Տե՛ս ан-Насави, стр. 164.

19 Լ. Բաբայանը Ջալալ ադ-Դինի վերադարձի շարժառիթ է համարում այն, որ խորեզմշահի «Թավրիզում եղած ժամանակ Շերեֆ-ալ-Մուլքը դավադրություն է նախապատրաստում նրա դեմ» (նշվ. աշխ., էջ 187)։ Այս կարծիքը ամենևին չի հաստատվում սկզբնաղբյուրներով. ուսումնասիրողը, առանց որևէ հիմքի, 1225 թ. է տեղափոխել Շարաֆ ալ-Մուլքի գործունեության 1230—1231 թթ. շրջանը։

20 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», էջ 143։

21 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 200։ Իվ. Ջավախիշվիլին թեև նշում է, որ Ջալալ ադ-Դինը Թբիլիսիի վրա է շարժվել հարավից, նկատի ունի ոչ թե Արարատյան դաշտ—Փամբակ լեռնաշղթա—Թբիլիսի իրական երթուղին, այլ հարավ-արևելյան՝ Աղվանքից Գագի վրայով Թբիլիսի տանող ուղին (ივ. ჯავახიშვილი, նշվ. աշխ., էջ 57)։

բավման ժամանակը (1226 թ. մարտի 9), թեև խորեզմցիների առաջխաղացումը սկսվել էր 1225 թ. վերջին[22]։ Երբ խորեզմշահը հասավ Արաքսին, պարզվեց, որ նրա բանակում գտնվող Շալվա Ախալցիխեցին, որը դերի էր ընկել Գառնիի ճակատամարտում, փորձել է նամակներով տեղեկացնել հայրենակիցներին խորեզմցիների մոտալուտ հարձակման մասին։ Շալվայի նկատմամբ հաշվեհարդար տեսնելուց հետո Ջալալ ադ-Դինը շարունակեց հարձակումը հարավից՝ Արարատյան դաշտով, և անցնելով Փամբակի լեռնաշղթան ու շրջանցելով Լոռե, Ալիաբադ ամրոցները շարժվեց Թբիլիսիի վրա[23]։

Խորեզմշահի կողմից քաղաքի դրավման պատմությունը, որ հանգամանորեն շարադրված է այլևայլ աղբյուրներում, ընդհանուր գծերով այսպես է ներկայանում։ Ջալալ ադ-Դինը չի կարողացել դրոհով դրավել քաղաքը և, ըստ ան-Նասավիի և Իբն ալ-Ասիրի, դիմել է ռազմական խորամանկության։ Նա, հաջողության չհասնելով, ցույց է տվել, թե նահանջում է, սակայն փախուստ տալով ու քաղաքի պաշտպաններին հետապնդելու հնարավորություն ընձեռելով, խորեզմցիները այնուհետև հանկարծակի հարձակում են գործել և հակառակորդի շփոթությունից օգտվելով ներխուժել են քաղաք[24]։ Թվում է, այդ ռազմական հնարքի նախնական փուլի արդյունքն է ակնարկում Վրաց ժամանակագիրը, երբ խոսում է «վրացիների փայլուն հաղթանակի» մասին և քաղաքի դրավման գործում վճռական դեր է վերագրում Թբիլիսիի մահմեդական բնակիչների օգնությանը[25]։ Իբն ալ-Ասիրի և ան-Նասավիի կողմից շրջանցվող[26] և հայկական աղբյուրներում[27] շեշտվող այդ փաստը խոստովանում է նաև ականատեսի ցուցումները շաղապատող ալ-Բաղդադին[28], անառարկելի դարձնելով այն կարծիքը, որ Ջալալ ադ-Դինը տեր է դարձել Թբիլիսիին մահմեդական քաղաքացիների օժանդակության շնորհիվ միայն։ Ալ-Բաղդադիի և Իբն ալ-Ասիրի տեղեկություններից երևում է, որ, չնայած դրան, խո-

---

22 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 159; ан-Насави, стр. 167. Ջ. Բոյլը, նշելով 1225 թ. դեպքերի ժամանակագրության կասկածելի լինելը ան-Նասավիի երկում, հավանական է համարում, որ ռազմական գործողությունները սկսվել են 1225 թ. ձմռանը, ինչպես որ վկայում է Իբն ալ-Ասիրը (տե՛ս „The Cambridge History of Iran", vol. 5, Cambridge, 1968 p. 327—328)։

23 Տե՛ս რ. კაკნაძე. ჯუვეინის ცნობები საქართველოს შესახებ, თბ., 1974, გვ. 31 (այսուհետև՝ ჯუვეინი): Рашид ад-Дин, Сборник летописей, т. 1, кн. 2, М.—Л., 1952, стр. 243. Լոռեի պաշտպանները խորեզմցիների գերիներին ազատ արձակելով, խուսափեցին գրավումից նաև 1229 թ. (տե՛ս ан-Насави, стр. 225), ուստի ճիշտ չէ, որ «խվարեզմյան հորդաները գրավում են Գանձակը, Լոռին, Տփխիսը» (Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 186, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», էջ 604)։ Ըստ Իբն ալ-Ասիրի (էջ 159), Թբիլիսիի ճանապարհին տեղի է ունեցել նա մեկ բախում վրացական զորքերի հետ, որոնք ուժեղացված են եղել ալաններով, լեզգիներով, ղփչաղներով ու այլ հարևան ժողովուրդներով։ Ջ. Բոյլը կարծում է, որ պատմիչը, թերևս, սխալվել է և նկատի է ունեցել Մինդորիի ճակատամարտը (տե՛ս „The Cambridge History of Iran", p. 328):

24 Տե՛ս ан-Насави, стр. 167—168; Ибн ал-Асир, стр. 159—160.

25 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 64։

26 Տե՛ս ан-Насави, стр. 167—168. Իբն ալ-Ասիրը միայն ակնարկում է այդ փաստը, պատմելով, որ խորեզմցիների ներխուժման ժամանակ Թբիլիսցի մահմեդականները գոռացել են իրենց կոչը (տե՛ս Ибн ал-Асир, стр. 159):

27 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 226։ Մխիթար Ասորի, էջ 530։

28 Տե՛ս С. Сahen, նշվ. աշխ., էջ 159։

ռեղմցիները վայրագություններ են գործել անգամ մահմեդականների նկատմամբ, թեև հիմնականում տուժել են վրացիները, հայերը և հրեաները[29]։

Գրավումից հետո Թբիլիսիում հաստատվեց Ջալալ ադ-Դինի վեզիր Շարաֆ ալ-Մուլքը, շարունակելով շրջակա երկրամասերի ավերումը[30], իսկ խորեզմշահը, 1226 թ. մայիսի վերջին—հունիսին[31] ստանալով իր կողմից Քերմանում թողնված Բարախ հաջիբի ապստամբության լուրը, մեկնեց այնտեղ։ Անցնելով Թբիլիսի—Քերման տարածությունը ընդամենը 17 օրում[32], Ջալալ ադ-Դինը չկարողացավ հնազանդության բերել Բարախին և օգոստոսի վերջին—սեպտեմբերին[33] վերադառնալով Թբիլիսի՝ նոր ասպատակություններ ձեռնարկեց տարբեր ուղղություններով[34]։ Այժմ, երբ վրացական թագավորությունը պարտության էր մատնված, նրա գլխավոր խնդիրը դարձավ Խլաթի նվաճումը, սակայն իր մտադրությունները քողարկելու համար խորեզմշահը նախ պաշարեց Անին, իսկ նրա ուղարկած զորաջոկատը՝ Կարսը[35]։ Արդյունքի չհասնելով, Ջալալ ադ-Դինը շավալ ամսվա սկզբին (1226 թ. սեպտեմբերի 25—հոկտեմբերի 23) վերադարձավ Թբիլիսի, տասնօրյա ասպատակության մեկնեց Արևմտյան Վրաստան և ապա անակնկալ հարձակում ձեռնարկեց Խլաթի վրա[36]։ Քաղաքի վրա այս առաջին հարձակումը և պաշարումը սկսվեց, ըստ Իբն ալ-Ասիրի, 1226 թ. նոյեմբերի 7-ին և շարունակվեց մինչև դեկտեմբերի 15-ը, հաջողություն չբերելով խորեզմշահին[37]։

Դադարեցնելով Խլաթի պաշարումը, խորեզմշահը պատժողական արշավանք ձեռնարկեց Իվայի թուրքական ցեղի դեմ, որը սպառնում էր Թավրիզին[38]։ Այս ձեռնարկումից հետո, որը ի դեպ բավական ժամանակ էր խլել Ջալալ ադ-Դինից, նա շարժվեց իսմայիլիտ աղանդավորների դեմ, որոնց ֆիդայիները Գանձակում սպանել էին Ուր-խանին[39]։ Իսմայիլիտների դեմ արշավանքից հետո, Ջալալ ադ-Դինը 1228 թ. օգոստոսի 25-ին Իսպահանի մոտ ճակատամարտ տվեց մոնղոլների դեմ, միայն շատ ծանր կորուստների գնով հասնելով հաղթանակի[40]։ Այսպիսով, ավելի քան մեկ տարի խորեզմշահը հեռացել էր Հայաստանից ու Վրաստանից, հնարավորություն ընձեռելով խորեզմական կայազորների դեմ պայքարի ծավալման համար։ Հենց այս ժամանա-

---

29 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 226։ Միխայել Ասորի, էջ 530։ «Վրաց ժամանակագրություն», էջ 64—65։

30 Տե՛ս ан-Насави, стр. 169. հմմտ. «Վրաց ժամանակագրություն», էջ 66։ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 43, 230։

31 Տե՛ս ан-Насави, стр. 370, прим. 4.

32 Տե՛ս ԶՍՅՈԵՐ, ՅՅ. 32: „The Cambridge History of Iran", p. 329:

33 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 162.

34 Տե՛ս ан-Насави, стр. 171.

35 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 162.

36 Տե՛ս նույն տեղում։ Ըստ պատմիչի, քաղաքի պաշտպանները, այնուամենայնիվ, տեղյակ էին դարձել սպասվող հարձակմանը։

37 Տե՛ս նույն տեղում, էջ 163, հմմտ. «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. 1, Երևան, 1951, էջ 40։

38 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 163—164, ан-Насави, стр. 172.

39 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 226—227։ Ан-Насави, стр. 178—179.

40 Տե՛ս „The Cambridge History of Iran", p. 329—330:

կամիջոցում էր, որ հայ-վրացական զորամասերը գրավեցին Թբիլիսին[41] և Դվինը[42], սակայն շուտով թողեցին այդ քաղաքները։ 1227—1228 թթ. Գանձակի շրջակայքում բազմաթիվ հարձակումներ գործեց Վահրամ Գաւգեցին, մեծ անհանգստություն պատճառելով խորեզմցիներին[43]։ 1227 թ. գարնանը, երբ խորեզմշահը զբաղված էր իվայիտներին հնազանդեցնելով, վրացական զորքերը պաշարեցին Շաքին ու Կապաղակը. միայն Ջալալ ադ-Դինի Գանձակ վերադառնալը հարկադրեց նրանց շուտափույթ հեռանալ այդ շրջանից[44]։ Այնուամենայնիվ, ինչպես երևում է, 1227—1228 թթ. հայկական ու վրացական սուանձին իշխանական տների հարձակումները էական վտանգ չեն ներկայացրել խորեզմցիների համար, ուստի 1228 թ. երկրորդ կեսին Իրաքից վերադառնալով՝ Ջալալ ադ-Դինը անմիջապես չշարժվեց Հյուսիսային Հայաստան ու Վրաստան, այլ երկրորդ անգամ արշավեց Խլաթի վրա։ Այս անգամ, սակայն, նա չպաշարեց քաղաքը և բավարարվեց Սշո դաշտը, Տողատափը, Դութաղը, Խարբերդը և շրջակա գավառներն ասպատակելով։ Վերահաս ձմեռն էր, որ հարկադրեց Ջալալ ադ-Դինին թողնել Խլաթի շրջակայքը և ձմեռելու մեկնել Ադրբեջան[45]։

Ռուսուդան թագուհին այդ ընթացքում կարողացավ նոր բանակ գումարել խորեզմցիների դեմ երկրորդ մեծ ճակատամարտը տալու համար։ «Կանչեց իր բոլոր զորքերին, իմերացիներին և ամերացիներին, Շանշե մանդատուրթուխուցեսին, Սվագ ամիրսալասալարին, Վահրամ մոսխուրթուխուցեսին, Հեր-կախեցիներին, սոմխիթացիներին, ջավախցիներին, մեսխերին, տայեցիներին, ավագանի և արժանավոր Յոտնե Դադիանին, ափխազներին, ջիքերին և իմերացիների ողջ թագավորությունը, որոնց մեկ առ մեկ թվարկելու ժամանակ չկա, բացեց Դարիալի դռները և [Վրաստան] տեղաշարժեց օսերին, դուրձուկներին, նրանց հետ նաև բոլոր մթիուլներին (լեռնականներին)»[46],— գրում է Վրաց ժամանակագիրը։ Օտար հեղինակներից Ջուվեյնին և Ռաշիդ ադ-Դինը, բացի Հյուսիսային Կովկասի ժողովուրդներից, այդ բանակի կազմում հիշա-

---

41 Ըստ ան-Նասավիի, Թբիլիսին գրավվել է Խլաթի պաշարման ժամանակ (տե՛ս էջ 172), իսկ Իբն ալ-Ասիրը (տե՛ս էջ 164) նշում է հիջրայի 626 թ. 1 ռաբի ամիսը (1227 թ. փետրվարի 19—մարտի 20)։ Թվում է, ճիշտ է Իվ. Ջավախիշվիլու ենթադրությունը, որ քաղաքը որոշ ժամանակ մնացել է վրացիների ձեռքում և հետո է միայն հրդեհվել և լքվել։ Ինչպես երևում է, ան-Նասավին նկատի է ունեցել Թբիլիսիի գրավման սկիզբը, իսկ Իբն ալ-Ասիրը՝ վերջը (տե՛ս ᲘᲕ. ᯆᲝᲜᲐᲮᲝᲨᲘᲚᲘ, նշվ. աշխ., էջ 69)։ Թբիլիսիի դեպքերի մասին վրացական ու հայկական աղբյուրները, բացառությամբ մեկի (տե՛ս Միխայել Ասորի, էջ 530), զարմանալիորեն լռում են։

42 Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 66, Միխայել Ասորի, էջ 529—530, հմմտ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 202—203, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 187։

43 Տե՛ս ан-Насави, стр. 226.

44 Տե՛ս նույն տեղում, էջ 193։

45 Տե՛ս Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 149։ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 231։ ан-Насави, стр. 216—219: Ибн ал-Асир, стр. 167. „The Cambridge History of Iran", p. 330—332:

46 «Վրաց ժամանակագրություն», էջ 70։

տակում են հայերին և ղփչաղներին[47], իսկ ան-Նասավին նշում է հավաքված զորքերի թիվը՝ շուրջ 40 հազար[48]։ Ճակատամարտը տեղի ունեցավ, ըստ Վրաց ժամանակագրի, Բոլնիսի մոտ[49], Ջուվեյնիի և Ռաշիդ ադ-Դինի ճշգրտմամբ՝ Մինդորի կոչված վայրում[50]։

Ռուսուդան թագուհու և Ջալալ ադ-Դինի զորքերի այս բախման ժամանակի հարցը գրեթե չի արծարծվել կովկասագիտական գրականության մեջ։ «Վրաստանի պատմության ակնարկներում» այս կարևոր իրադարձությունը թվագրելու փորձ չի արվում[51], իսկ Իվ. Ջավախիշվիլին առաջարկում է 1227—1228 թթ.[52]։ Ան-Նասավիի վկայությունների քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ Մինդորիի ճակատամարտը տեղի է ունեցել խորեզմշահի Ադրբեջան ձմեռելու մեկնելուց (1228 թ.) հետո և 1229 թ. ամռանը Խլաթը պաշարելուց առաջ[53], հետևաբար 1229 թ. գարնանը։

Կռվի սկզբում Ջալալ ադ-Դինը կարողացավ իր կողմը գրավել ղփչաղական 20 հազարանոց ջոկատը, որը հրաժարվեց մարտնչել խորեզմցիների դեմ[54], իսկ մնացած բանակը ի վիճակի չեղավ հաջողության հասնել, ուստի, այս անգամ ևս, «հաղթվեցին թագավորական զորքերը և խորեզմցիների կողմից փախուստի մատնվեցին»[55]։ Հաղթանակից հետո Ջալալ ադ-Դինը պաշարեց Լոռեն և դերի ընկած խորեզմցիներին ազատելուց հետո շարժվեց Վահրամ Գագեցու տիրույթների վրա։ Ճանապարհին նա նախ գրավեց Շաքան բերդը, ապա ավերեց Իվանե աթաբեկի քույր Թամթային[56] պատկանող Ալիաբադ ամրոցը, այնուհետև, անելանելի դրության մեջ դնելով բերդապահներին՝ մեծ գումարներ կորզեց Գագ և Գավազին բերդերի պաշտպաններից[57]։ Եթե նկատի ունենանք, որ միայն վերջին երկու ամրոցների պաշարումը տևել էր երեք ամիս, ապա պարզ կդառնա, թե ինչու միայն 1229 թ. ամռանը խորեզմշահը կարող էր ձեռնարկել իր գործունեության մեջ ամենաերկարատև և ըստ ամենայնի բեկումնային գործողությունը՝ Խլաթի երկրորդ պաշարումը։ Քաղաքը

---

47 Տե՛ս Ջ Ղ ա ղ ա ն ի, գ3. 35, Рашид ад-Дин, Сборник летописей, т. II, М.—Л., 1960, стр. 28.

48 Տե՛ս ан-Насави, стр, 224.

49 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 70։

50 Ջուվեյնին (էջ 35) և Ռաշիդ ադ-Դինը (էջ 28) աղավաղումով են ներկայացնում վրացերեն «դաշտ» նշանակող բառը։ Ռ. Կիկնաձեն վրացական փաստաթղթերի հիման վրա ցույց է տվել այդ միկրոտեղանվան իրական լինելը հենց Բոլնիսի շրջակա տարածքում (Ջ Ղ ա ղ ա ն ի, գ3. 71—72, ծան. 76)։

51 Տե՛ս Საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ3. 544.

52 Տե՛ս ი3. ჯ ა ვ ა ხ ი შ ვ ი ლ ი. Նշվ. աշխ., էջ 328։ Թ. Փարցվանիան ավելի կոնկրետ թվական է նշում՝ 1228 (տե՛ս თ. ფ ა რ ც ვ ა ნ ი ა, ჯალალ ად დინის..., გ3. 45).

53 Տե՛ս ан-Насави, стр. 216—230.

54 Տե՛ս Ջ Ղ ա ղ ա ն ի, գ3. 36. Рашид ад-Дин, II, стр. 28.

55 «Վրաց ժամանակագրություն», էջ 70, հմմտ. ан-Насави, стр. 224—225. Рашид ад-Дин, II, стр. 28. Ջ Ղ ա ղ ա ն ի. գ3. 36։

56 Թեև ան-Նասավին չի մատնացուցում Թամթայի տեղը Զաքարյանների տոհմածառում, հիշատակելով նրան սոսկ իբրև «մալիքա», սակայն քանի որ Իվանեի՝ այդ անունը կրող դուստրը այդ ժամանակ Խլաթում էր, պետք է ենթադրել, որ պատմիչը նկատի է ունեցել հայկական աղբյուրներից հայտնի Իվանեի քույր Թամթային։

57 Տե՛ս ан-Насави, стр. 226.

ութ կամ տասը ամսվա հյուծիչ շրջափակումից հետո դրավվեց[58], սակայն ծայրաստիճան սրվեցին հակասությունները ինչպես Խլաթի տեր Մելիք Աշրաֆի, այնպես էլ Իկոնիայի սուլթան Քեյ-Կուբադի հետ։ Խորեզմշահի բախումը Քեյ-Կուբադի և Էյուբյանների միացյալ զորաբանակի հետ 1230 թ. օգոստոսի 10-ին Յասսի Չիմանում[59], Երզնկայի մոտ, ավարտվեց Ջալալ ադ-Դինի պարտությամբ[60], որից նա այդպես էլ չկարողացավ ուշքի գալ։ Խորեզմշահը

---

58 Ըստ Ջուվեյնիի, քաղաքը դրավվել է 1230 թ. ապրիլի 15-ին (տե՛ս ан-Насави, стр. 402—403, прим. 8), իսկ Իբն ալ-Ասիրի տեղեկությունների համաձայն՝ 1230 թ. մարտի վերջին (էջ 168)։ Այս թվագրումները ելակետային համարելով փորձենք ետադարձ հաշվարկ կատարել։ Եթե հավատի է Ջուվեյնիի հաղորդումը՝ պաշարման տևողությունը 8 ամիս լինելու վերաբերյալ, ապա պաշարումը սկսվել է 1229 թ. օգոստոսին, իսկ եթե ավելի ստույգ է հայկական աղբյուրների վկայած 10 ամիսը (տե՛ս Սամվել Անեցի, էջ 149—150), ավելի շուտ՝ հունիսին։ Լ. Բարայանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 187) և Զ. Բունիաթովը (տե՛ս ан-Насави, стр. 401, прим. 1) Խլաթի պաշարման տևողությունը դնում են 1,5 տարի, բայց, ինչպես տեսանք, Խորեզմշահը մինչև 1229 թ. ամառը զբաղված էր այլ ձեռնարկումներով։

59 Այս վայրը (բառացի նշանակում է «ընդարձակ մարգագետին») գտնվում է Քոսեդաղ լեռան մոտ, ուր 1243 թ. տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Իկոնիայի սուլթանության և մոնղոլների միջև (տե՛ս C. Cahen, նշվ. աշխ., էջ 165, ծան. 36)։ Պետք է ենթադրել, որ տեղանվան «Չիման» բաղադրիչը առկա է Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Չմանկատուկ»-ում, որով և հասկանալի է դառնում, թե ինչու է հայ պատմիչը Քոսեդաղի ճակատամարտը տեղի ունեցած համարում Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 282)։ Յասսի Չիմանի ճակատամարտը նաև հայ ժամանակագրություններում է հիշատակվում (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 105։ Սամվել Անեցի, էջ 149—150)։ Ի դեպ, հրատարակություններում և թարգմանություններում վերջին աղբյուրի բնագիրը մեծապես աղավաղված է. «Ալադին սուլտանն և Աշրաֆն մարտեան ընդ նոսա, և կոտորեաց զնոսա յոյժ և Սուչման ամիրայն՝ որ առաջնորդ էր Խորազմին՝ կալան և սպանին»։ Բնագիրը ավելի ճիշտ է պահպանվել Երուսաղեմի Մ. Հակոբյանց վանքի № 343 ձեռագրում, որը Սամվել Անեցու երկի շարունակություններից մեկն է. «Յալատին սուլտանն և Աշրաֆն կոտորեցին զնայ Եասսիչիմանն և զԿարնոյ Խաղաքն տին և զմելիքն, որ առաջնորդ էր Խորազմին, կալան և սպանին» (տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 525—526. դարմանալի է, որ Գ. Հովսեփյանը այս ձեռագիրն է համարում խաթարված)։ Վաղարշապատյան հրատարակությունում ոչ միայն հաղթող է ներկայացված Խորեզմշահը, այլև գոյություն չունեցող «Սուչման ամիրայ» է ստեղծված։ Շփոթությունը առաջացել է «Եասսի չիման» տեղանունը անձնանուն ընկալվելու և Կարինի տեր Ռուբն ադ-Դինի, որը իրոք օգնում էր Ջալալ ադ-Դինին (տե՛ս ан-Насави, стр. 232—234, 254—255), «մելիք» տիտղոսը (տե՛ս „The Encyclopaedia of Islam", New ed., vol. II, Leiden—London, 1965, p. 712) «ամիրա»-ով փոխարինելու միջոցով։ Քոսեդաղ—Չմանկատուկ—Յասսի Չիման կապը հաստատում է Մխիթար Այրիվանեցին, որ 1243 թ. ճակատամարտի մասին գրում է. «Եհար Թաթարն զՀոռմոց սուլտանն յԱսուչմանն (Մխիթար Այրիվանեցի, էջ 67)։ Ք. Պատկանյանը խնդրո առարկա տեղանունը անձնանուն է ընկալել. «Татары разбили Румского султана, Асучмана» (Мхитар Айриванский, Хронологическая история, перевод с армянского с предисловием и примечаниями К. Патканова, СПб., 1869, стр. 415, отд. оттиск)։

60 Տե՛ս ан-Насави, стр. 256—257. Ибн ал-Асир, стр. 169—170. Рашид ад-Дин, II, стр. 29. C. Cahen, նշվ. աշխ., էջ 156—157, Ջ Ղ ՅՅ ո ճ ո, ՅՅ. 41. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 232։ Կիրակոս Գանձակեցի, էջ 228—229։ Ըստ հայ պատմիչի, Խորեզմշահի հակառակորդ բանակում կային օգնական զորամասեր Կիլիկիայի հայկական թագավորությունից և խաչակիրներից։ 1230 թ. հայկական հիշատակարաններից մեկում օգոստոսի 25-ով թվագրվող գրառումում խոսվում է սպասվելիք ճակատամարտի մասին, առանց տեղյակ լինելու, որ այն արդեն տեղի է ունեցել (տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 872)։

այլևս չդիմեց որևէ լուրջ հարձակողական գործունեության և այնուհետև ստիպված էր հոդալ սոսկ սեփական անձի փրկության մասին։ Ճակատամարտի վայրից նա նախ մեկնեց Խլաթ, ապա Խոյ և այդ ժամանակ էլ լսեց, որ մոնղոլները Զարմաղանի գլխավորությամբ անցել են Ամու Դարյա գետը և շարժվում են իր դեմ[61]։ Սարսափահար Ջալալ ադ-Դինը, դիմադրելու փորձ իսկ չանելով փախավ Բիշքին, ապա Մուղան, իսկ այնտեղից, լսելով մոնղոլների մոտենալը, հեռացավ Կապան[62]։ Ջալալ ադ-Դինի վերադարձը Հայաստան այս անգամ չէր հետապնդում կողոպուտի և թալանի նպատակ. խորեզմշահը սոսկ ցանկանում էր կորցնել իր հետքերը՝ մոնղոլներին խաբելու համար, որը և նրան հաջողվեց։ Մոնղոլական առաջապահ ջոկատը դատարկ ու ավեր գտնելով խորեզմշահի իջևանավայրը՝ վերադարձավ Զարմաղանի մոտ, և Ջալալ ադ-Դինը հնարավորություն ստացավ ձմեռն անցկացնել Ուրմիայում և Ուշնիայում[63]։ 1231 թ. սկզբին, սակայն, մոնղոլները նոր եռանդով վերսկսեցին թշնամու հետապնդումը։ Նրանց հանկարծակի հարձակմանը ենթարկված Ջալալ ադ-Դինը թեև կարողացավ մի կերպ կենդանի դուրս պրծնել, այնուամենայնիվ շուտով իր մահը գտավ Ամիդի մոտակայքում, սպանվելով տեղացի քրդերի ձեռքով[64]։

Խորեզմշահի մահով, սակայն, Մերձավոր Արևելքում ամենևին էլ չվերականգնվեց նախկին վիճակը։ Խորեզմցիների արշավանքները կարճ ժամանակամիջոցում զգալի տեղաշարժեր էին առաջ բերել նաև Անդրկովկասի քաղաքական իրադրության մեջ՝ ստեղծելով ուժերի նոր հարաբերակցություն արտաքին ասպարեզում։ XIII դարի 30-ական թթ. ստեղծված քաղաքական կացությունը, Հայաստանի և Վրաստանի վիճակը մոնղոլական գլխավոր արշավանքին անմիջականորեն նախորդող տարիներին, հայկական հողերի ազատագրման գրեթե դադարեցումը բավարար լուսաբանության չի արժանացել

---

61 Տե՛ս ан-Насави, стр. 268—269. C. Cahen, նշվ. աշխ., էջ 156—157, ՀՍՅՅՈՆՈ, ՃՃ. 41, Рашид ад-Дин, II, стр. 30. Ибн ал-Асир, стр. 171—172: Այսպիսով մոնղոլները Իրան են ներխուժել ոչ թե 1227 թ., ինչպես կարծում է Հ. Մանանդյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 204), կամ 1229 թ. (հիմնվելով Խոնդեմիրի XV դարով թվագրվող վկայությունների վրա, Հ. Մանանդյանի առաջարկած տարեթիվը այսպես է սրբագրում Լ. Բաբայանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 189), այլ 1230 թ.։

62 Տե՛ս ՀՍՅՅՈՆՈ, ՃՃ. 42. Рашид ад-Дин, II, стр. 30. Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 230։ «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», էջ 144։

63 Տե՛ս ՀՍՅՅՈՆՈ, ՃՃ. 42. Рашид ад-Дин, II, стр. 30.

64 Տե՛ս ан-Насави, стр. 295—296. ՀՍՅՅՈՆՈ, ՃՃ. 43—44. Рашид ад-Дин, стр. 31. Կիրակոս Գանձակեցի, էջ 230։ «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», էջ 144։ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 233—234։ «Վրաց ժամանակագրություն», էջ 71—72։ Ջալալ ադ-Դինի մահից հետո խորեզմցիները ծառայության մտան Մերձավոր Արևելքի զանազան իշխողների մոտ՝ կռվելով խաչակիրների, իրենց հովանավորողների հակառակորդների, երբեմն էլ հենց իրենց նախկին տերերի դեմ (տե՛ս „A History of the Crusades", General editor K. M. Setton, vol. II, The University of Wisconsin Press, 1969, p. 489, 561—564, 673—674, 708—710): Այդ անցուդարձերից մի միջադեպ արձանագրված է նաև հայկական սկզբնաղբյուրներում. «ՌՄԽԴ (1244) Հալպցին գնորազմ կոտորեաց» (Սամվել Անեցի, էջ 150, տողատակ)։ Ինչպես երևում է, հայ հեղինակը նկատի է ունեցել խորեզմցիների ջախջախիչ պարտությունը Հալեպի տիրակալի և նրա դաշնակիցների միացյալ բանակից Հիմսի մոտ 1246 թ. (տե՛ս վերոհիշյալ անգլերեն աշխատությունը)։

մասնագիտական դրականության մեջ, այդ պատճառով էլ առանց բացատրության են մնացել որոշ կարևոր իրողություններ։

Խորեզմցիները, թուլացնելով վրացական թագավորության ռազմական հզորությունը, հնարավորություն ընձեռեցին Քեյ-Կուբադի օրոք իր հզորության գագաթնակետին հասած Իկոնիայի սուլթանությանը վերսկսել սելջուկ թյուրքերի առաջխաղացումը Հյուսիս-արևմտյան Հայաստան, որ դարասկզբին ընդհատվել էր Բասենի ճակատամարտում Ռուքն ադ-Դինի ջախջախումով։ Խորեզմշահի արշավանքների միջոցին (1228 թ.) Քեյ-Կուբադը անմիջականորեն իր տիրույթների մեջ մտցրեց մինչ այդ նրա ստորականերին պատկանող Երզնկան և Կամախը[65], իսկ Յասսի Ջիմանի ճակատամարտից հետո մահապատժի ենթարկելով Ջալալ ադ-Դինին օգնող իր հորեղբորորդի Ռուքն ադ-Դին Ջահան-շահ իբն Տուղրիլ-շահին՝ նրա ժառանգներից խլեց և Կարինը[66]։ Շուտով Իկոնիայի սուլթանությունը ղգայի հաջողությունների հասավ Վրաստանի և Էյուբյանների նկատմամբ։ 1232—1233 թթ. Քեյ-Կուբադը գրավեց Խլաթը[67], իսկ Վրաստանից նվաճեց բազմաթիվ սահմանամերձ բերդեր։ Թեև Ռուսուդան թագուհուն հաջողվեց զիջումների ճանապարհով հաշտություն կնքել և համաձայնություն ձեռք բերել թագաժառանգ Ղիյաս ադ-Դինի և Ռուսուդանի դուստր Թամարի ամուսնության վերաբերյալ[68], ակներև է, որ Իկոնիայի սելջուկների ճնշումը շարունակվում էր ընդհուպ մինչև մոնղոլների արշավանքը Փոքր Ասիա (1243 թ.)[69]։ Իկոնիայի սուլթանությունը կարողացավ նաև նեղ վիճակի մեջ դնել իր մյուս հզոր հարևանին՝ Էյուբյանների իշխանությունների միությանը։ Բացի Խլաթից, Հարավային Հայաստանում և Հյուսիսային Միջագետ-

---

65 Տե՛ս EI, New ed., vol. II, p. 711, հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 139։ Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 109։ «Մանր ժամանակագրությունների» «ՌՀԵ» թվագրումը (1226) կարիք է զգում սրբագրման «ՌՀԷ»-ի (1228), քանի որ օտար աղբյուրների համեմատությամբ նկատվող 2 տարվա տարբերությունը ծագել է «Ե»—«Է» տառերի շփոթության պատճառով։

66 Հ. Մանանդյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 203) և նրա հետևությամբ նաև Լ. Բաբայանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 188) թյուրիմացաբար կարծում են, թե Քեյ-Կուբադի հորեղբորորդին տիրել էր Կարինին Ջալալ ադ-Դինի աջակցությամբ։ Իրականում Կարինը Ռուքն ադ-Դինին էր անցել հորից՝ Տուղրիլ-շահից, որի Կարինի տիրակալ լինելը երկիցս արձանագրում է հենց Հ. Մանանդյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 148, 197)։

67 Թյուրքական անանուն հեղինակի տվյալներով, Խլաթի (ըստ Իբն Բիբիի, նաև Վանա լճի մերձակա տարածքի), Խարբերդի, Բալուի գրավումը տեղի է ունեցել 1232 թ. (տե՛ս Ն. Ծ ա գ ա ր ե լ ի, იბნ ბიბი ალა ად-დინ ყეყუბადის საქართველოში ლაშქრობის შესახებ, „ძაცნე" (ისტ. ს.), 1975, № I, გვ. 105). Ստեփանոս Օրբելյանը Խլաթի գրավումը դնում է 1233 թ. («Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 41)։ Համաձայն Իբն Բիբիի, էյուբյանները 1233 թ. միացյալ արշավանք են ձեռնարկել Խլաթը վերադարձնելու նպատակով, սակայն հաջողություն չեն ունեցել (տե՛ս Ն. Ծ ա գ ա ր ե լ ի, նշվ. աշխ.) էջ 105։ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 235։ Սամվել Անեցի, էջ 149, տողատակ)։ Հետևաբար, այն կարծիքը, թե մոնղոլները Բաչուի գլխավորությամբ իրենց արշավանքի ժամանակ գրավել են Խլաթը «վերջ տալով Այյուբյանների տիրապետությանը Հարավային Հայաստանում» (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 612), իրականությանը չի համապատասխանում։

68 Տե՛ս Ն. Ծ ա գ ա ր ե լ ի, նշվ. աշխ., էջ 99—104։

69 Պատահական չէ, որ 1239 թ. նրանց հաջողվեց գրավել նաև Կարսը (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 41)։

քում սելջուկների ձեռքը անցան Խարբերդը (1232/1233 թթ.), Ուռհան, Խառանը, Սևերակը (1235 թ.); Ամիդը (1241 թ.)[70]։

XIII դարի սկզբին Հարավային Հայաստանում այնքան հզոր էյուբյանների թուլացումից մասամբ միայն կարողացան օգտվել Զաքարյանները, որոնցից Շահնշահը 1235 թ. գրավեց Սուրմարին[71]։ Զաքարյանները, հատկապես Վահրամյան և Ավագյան տները, ի վիճակի չեղան հանուն իրենց նպատակների ծառայեցնել Ելտկուզյանների աթաբեկության վերացումը, քանի որ վերջիններիս պատկանող տարածքը ընդունեց մոնղոլների գերիշխանությունը և սկսեց հարկ վճարել նրանց[72]։ Միակ հաջողությունը այս ուղղությամբ Վահրամ Գագեցու կողմից Շամքորի վերագրավումն էր[73]։ Այսպիսով, XIII դարի 30-ական թթ. Անդրկովկասում հաստատված նոր քաղաքական կացությամբ պետք է բացատրել այն փրողությունը, որ, չնայած Վրաստանի նախկին հզոր հակառակորդ Ելտկուզյանների ու էյուբյանների իշխանության վերացմանը, Հայաստանի ազատագրության գործում մոնղոլական նվաճման նախօրեին միայն աննշան հաջողություններ ձեռք բերվեցին։

Գիտական գրականության մեջ առայժմ լուսաբանվել են այն պատճառները, որոնք պայմանավորեցին Ջալալ ադ-Դինի պարտությունը, սակայն անհամեմատ սակավ ուշադրություն է դարձվել խնդիրը հակառակ առումով պարզաբանելու վրա։ Լիովին օրինաչափ է նաև այն հարցադրումը, թե ինչո՞ւ վրացական թագավորությունը անզոր դտնվեց սեփական ուժերով վանելու թշնամուն, չկարողացավ արժանի դիմադրություն ցույց տալ նրան։ Թվում է, այդ հարցի բանալին պետք է փնտրել ներքաղաքական կացության մեջ։ Այդ կացության բարդությունը, երկրի պաշտպանունակության հնարավորությունները պարզ են դառնում, երբ վերհիշում ենք խորեզմշահի դեմ ծավալված պայքարի հիմնական դրվագները։ Գառնիի ճակատամարտից հետո, երբ խորեզմշահը վերադարձավ Թավրիզ, Հայաստանում և Վրաստանում մնացած նրա բանակի աշ թևի ամիրսներին որևէ դիմադրություն ցույց չտրվեց, և նրանք երեք ամիս անպատիժ ասպատակություններ էին գործում։ Կասկած չի կարող լինել, որ միայն մի քանի իշխանական տների միացյալ զորամասերը կարող էին հաղթանակ տանել անջատ-անջատ գործող հրոսակախմբերի դեմ։ Սակայն այդպիսի հակահարվածի փորձ չարվեց, որը վկայում է ոչ միայն թագավորական իշխանության անկարողության, այլև առանձին երկրամասերի իշխողների միջև անհամաձայնության և անհամերաշխության մասին։ 1225 թ. վերջից սկսած մինչև 1226 թ. մարտը, մինչ Ջալալ ադ-Դինը շարժվում էր Թբիլիսիի վրա, թշնամուն գրեթե դիմադրություն ցույց չտրվեց։ Ակադ. Ջավախիշվիլին իրավացի է, նշելով ամիրսպասալարի գործունեության գրեթե ան-

70 Տե՛ս Ց. Ծ ղ ե ց ղ ա ն ո վ, նշվ. աշխ., էջ 105։ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 41։ Սամվել Անեցի, էջ 150։

71 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 41, հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 260։ Հավանաբար, այդ ժամանակ են գրավվել նաև Կաղզվանը և Վաղարշակերտը (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 391—392, հմմտ. «Վրաց ժամանակագրություն», էջ 91)։

72 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 176.

73 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 242, հմմտ. Ա. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 62։

նկատելի լինելը այդ ճակատագրական պահերին[74], սակայն այդ աչքի ընկնող երևույթը չի փորձում կապել Գառնիում իրենց զգացնել տված ներդաշնակարգային պայքարի և միջավայրային անհամաձայնությունների հետ։ 1225—1226 թթ. դեպքերի միասնական քննությունը, սակայն, ակներև է դարձնում, թե ինչքան խորն էր ներքաղաքական ճգնաժամը, և Գառնիի իրադարձությունները այդ ետնախորքի վրա ամենևին էլ արտասովոր չեն թվում։ Անդամ 1227—1228 թթ., երբ առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին խորեղմցիներին արտաքսելու համար, բնավ չէր դիտվում այն ուժը, որը պետք է միավորեր դինված պայքարը թշնամու դեմ։ Ավելին, նույն այդ ժամանակ խորեղմշահի վեզիր Շարաֆ ալ-Մուլքը պաշարեց և հարկադրեց փրկային մուծել Խուշենի իշխան Հասան-Ջալալին[75], իսկ վերջինիս ազգական և գերակա Զաքարյանները օգնության փորձ իսկ չձեռնարկեցին։ Բնորոշ է հայկական երկրամասերից Կապանի ճակատագիրը այդ տարիներին։ Այստեղի բերդերին, ինչպես պատմում է ան-Նասավին, տիրացել էին առանձին ամիրաներ, որոնց հնազանդության բերեց Ջալալ ադ-Դինից անկախ գործող Ուզբեկի նախկին մամլյուկ Բուգդայը[76]։ Սակայն տեղական հայ իշխանները անկարող էին եղել պայքարել անդամ այդ ինքնակոչի դեմ։ 1230—1231 թթ. ևս, երբ Կապանում ապաստան գտավ Ջալալ ադ-Դինը, այստեղի բերդերին, հավանաբար, տիրում էին խորեղմցիները, այլապես խորեղմշահը դժվար թե ցանկանար ապաստան գտնել բացարձակ թշնամական միջավայրում։

Հայ և վրացի իշխանների գործողություններում խորեղմշահի արշավանքների ամբողջ ընթացքում ի հայտ էր գալիս ևս մեկ ուշագրավ երևույթ, որի կործանարար հետևանքները լիովին երևան էին գալու ընդամենը մեկ տասնամյակ անց։ Փակվելով իրենց ամրոցներում, նրանք գերադասում էին համաձայնության գալ Ջալալ ադ-Դինի հետ և փրկագին վճարելով ապահովել իրենց հանգստությունը։ Թագավորական իշխանության տեսանկյունից իշխանների նման քայլերը հավասար էին դավաճանության, սակայն Ռուսուդան թագուհին այլևս ի վիճակի չէր պատժելու «անհավատարիմ» ստորականներին։ Ինչպես երևում է, այդ «անհավատարիմները» նաև անհնազանդություն էին դրսևորում, չմասնակցելով թագուհու ռազմական գործողություններին, ուստի Մինդորիի ճակատամարտում Գառնիի համեմատությամբ բավականին մեծ թիվ էին կազմում վարձկանները։ Օրինաչափ է թվում, որ անդամ այդ ճանապարհով Ռուսուդանին չհաջողվեց այնքան զորք հավաքել, որքան գումարվել էր Գառնիում ընդամենը չորս տարի առաջ։ Մինդորիի պարտությունը ավելի էր թուլացրել թագավորական իշխանության դիրքերը, այլապես դժվար է բացատրել թագուհու կողմից իր անչափահաս որդուն՝ ապագա Դավիթ Նարինին թագադրելը 1230 թ.։ Բնութագրական է, որ այդ իրադարձությանը չմասնակցեցին Արևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի իշխանները, և թեև Վրաց ժամանակագիրը փորձում է հավատացնել, որ նրանք բոլորն էլ հնազանդ էին մնում Ռուսուդանին, այդ հավաստիացումը ավելի է խորացնում

---

74 Տե՛ս Օ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 326։

75 Տե՛ս ан-Насави, стр. 211.

76 Տե՛ս նույն տեղում, էջ 212—213։

կասկածները[77]։ Խորեզմցիների արշավանքների միջոցին սրված ներքաղաքական ճգնաժամն էր, որ կրկին ասպարեզ հանեց Գեորգի Լաշայի որդի Դավթի՝ դահի նկատմամբ ունեցած իրավունքների հարցը[78]։

Թագավորական իշխանության դիրքերի թուլացման պայմաններում անջատողական ձգտումները իրենց երկար սպասեցնել չպետք է տային, ընդ որում ամենահարմար առիթը լինելու էին արտաքին քաղաքական իրադարձությունները։ Այն փաստը, որ հայ և վրացի իշխանները XIII դարի 30-ական թթ. հանձնում էին իրենց բերդերը, բնավ չմտահոգվելով թագուհուց թույլտվություն ստանալու մասին, իսկ որոշ դեպքերում էլ գործարքի մեջ էին մտնում մոնղոլների հետ՝ հարևանների հաշվին իրենց տիրույթները ընդարձակելու համար, իր բացատրությունն է դտնում վրացական թագավորության ներքին զարգացման ընթացքով։ Ջալալ ադ-Դինի արշավանքները, խորացնելով ներքաղաքական ճգնաժամը, նշանակալիորեն նպաստեցին տնտեսական և սոցիալական առումներով նախապատրաստված անջատողական միտումների հանդես գալուն։ Գառնիի ճակատամարտից ընդամենը մեկ տասնամյակ անց՝ 1236 թ., Դուսուդան թագուհին այլևս չէր էլ կարող երազել մոնղոլների դեմ 60 հազարանոց բանակ հանելու մասին, կենտրոնական իշխանությունը նույնիսկ ի սեռ ճակի չեղավ թշնամուն կազմակերպված դիմադրություն ցույց տալու։

Այսպիսով, Ջալալ ադ-Դինի արշավանքները ոչ միայն թուլացրեցին վրացական թագավորությունը տնտեսական ու ռազմական առումներով, այլև ազդելով սոցիալական տեղաշարժերի ընթացքի վրա՝ որոշ չափով պայմանավորեցին մոնղոլներին ցույց տրված այդքան թույլ դիմադրությունը Հայաստանում և Վրաստանում։ Այս էր խորեզմշահի արշավանքների ամենակարևոր հետևանքը։

## К ИСТОРИИ НАШЕСТВИЙ ДЖАЛАЛ АД-ДИНА НА АРМЕНИЮ И ГРУЗИЮ

Кандидат историч. наук А. Г. МАРГАРЯН

(Резюме)

В статье на основе армянских и грузинских первоисточников, с учетом свидетельств арабских и персидских авторов Ибн ал-Асира, ан-Насави, ал-Багдади, Джувейни, Рашид ад-Дина уточняется хронология нашествий Джалал ад-Дина, маршруты передвижения хорезмийцев, освещается борьба армянского и грузинского народов против захватчиков. Особое место уделено выяснению причин поражения грузинского царства в борьбе с Джалал ад-Дином, оценке внутриполитической ситуации в Закавказье и обстановки на Ближнем Востоке в 30-е годы XIII в., не պոզволивших продолжить начатое было освобождение армянских земель от чужеземцев.

---

77 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 68. հմմտ. Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 155։

78 Տե՛ս նույն տեղում, էջ 154—156։ ა. აბდალაძე, ლაშა გიორგის მემკვიდრის საკითხისათვის, „მაცნე" (ისტ. ს.), 1975, № 4, გვ. 102—106.